ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 48

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25-ը դեկտեմբերի 2020թ.

Առցանց կազմակերպված նիստին մասնակցել է գիտական խորհրդի 35 անդամներից 32-ը: Նիստն անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն էր Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարը՝ Մ. Ս. Աթոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մակարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հաղորդում 2020թ.-ի ընդունելության արդյունքների մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան** /
2. ԵՊՀ ԻՄ-ի 2019-2020թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյան** /
3. ԵՊՀ ԻՄ-ի 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին: /Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահ **Մ. Միսիթարյան** /
4. Ընթացիկ հարցեր:
   4.1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը հաստատելու մասին:
   4.2. «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» հաստատելու մասին:

Բաց քվեարկությամբ՝ 32 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

Որոշում՝ 48/1

- Հաստատել նիստի օրակարգը:

<u>Օրակարգի առաջին՝</u> «Հաղորդում 2020թ.-ի ընդունելության արդյունքների մասին» հարցի վերաբերյալ **ԵՊՀ ԻՄ-ի ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի** զեկույցը ներկայացվում է ստորև.

«2020-2021 ուստարում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը բակալավրի առկա ուսուցմամբ ընդունելությունն իրականացրել է կրթության պետական կառավարման

լիազորված մարմնի կողմից հաստատված 12 մասնագիտությունների՝ 13 կրթական ծրագրերով:

Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ է ներկայացրել 266 դիմորդ: Հայտագրված դիմորդների 95%-ը կազմել են Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտները: Ընդունելության քննությունների արդյունքներով հրամանագրվել է 188 ուսանող:

«Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագիրը չի բացվել՝ դիմորդների ընդունելության քննության անբավարար արդյունքների պատճառով:

Բակալավրի հեռակա ուսուցմամբ ընդունելությունն իրականացվել է 7 կրթական ծրագրերով: Ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմում-հայտ է լրացրել 135 դիմորդ: Քննություններին մասնակցել է 113 դիմորդ (22 դիմորդ, ելնելով պատերազմական իրավիճակից, քննությունները հանձնել են պատերազմից հետո): Քննությունների արդյունքով հրամանագրվել է 88 ուսանող:

2020թ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հեռակա ուսուցմամբ ընդունելություն է իրականացրել նաև «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրով: Մասնաճյուղում անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացրել և ընդունելության դիմում-հայտ է լրացրել 38 դիմորդ: Ընդունելության հարցազրույցի և քննության արդյունքներով հրամանագրվել է 25-ը (6 դիմորդ չի ներկայացել, 7 դիմորդ դուրս է մնացել մրցույթից):

2020թ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ընդունելություն է իրականացվել նաև ՄՄՈՒՀ-ից բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների համար: Մասնաճյուղ է դիմել 33 շրջանավարտ: Ընդունելության արդյունքում հրամա-նագրվել է 32 ուսանող:

Այսպիսով 2020-2021 ուստարում Մասնաճյուղ է դիմել բակալավրի կրթական ծրագրով 434 դիմորդ, մագիստրատուրայի կրթական ծրագրով՝ 38 դիմորդ: Արդյունքում Մասնաճյուղում հրամանագրվել է բակալավրի կրթական ծրագրով 308 ուսանող, մագիստրատուրայի կրթական ծրագրով՝ 32 ուսանող:»

Առցանց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

ՈՐՈՇՈՒՄ 48/2

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ</u>՝ « ԵՊՀ ԻՄ-ի 2019-2020թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը›› հարցի հետ կապված ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանի** հաղորդումը հետևյալն էր.

« 2019-2020 ուսումնական տարին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար մեկնարկել է հատուկ ոգևորությամբ և հետաքրքիր միջոցառումներով, գիտաժողովներով, աշխատաժողովներով՝ պայմանավորված Մայր բուհի 100-ամյա և նրա միակ մասնաճյուղի 25-ամյա հոբելյաններով: 25 տարի մասնաճյուղը հաջողությամբ կատարում է իր կրթական գործառույթները և միաժամանակ հանդես գալիս ՀՀ հյուսիս-արևելյան տարածաշրջանի սահմանապահ ու անառիկ ամրոց: Այդ տարիների ընթացքում մասնաճյուղը տվել է 6000-ից ավել շրջանավարտ, ովքեր անփոխարինելի դերակատարություն ունեն մարզի զարգացման բոլոր ոլորտներում:

Մասնաճյուղի գործունեությունը մշտապես եղել և մնում է ԵՊՀ ղեկավարության և անձամբ ռեկտորի ուշադրության կենտրոնում: Այստեղ երկար տարիներ կողք-կողքի նվիրումով և սրտացավությամբ աշխատում և իրենց գիտական նվաճումներն ու փորձը երիտասարդությանն են փոխանցում Մայր բուհից հրավիրված բարձրակարգ դասախոսներն ու տեղացի մասնագետները, որոնցից շատերը մասնաճյուղի շրջանավարտներ են: Իր կրթական գործունեության և համագործակցային աշխատանքների շնորհիվ մասնաճյուղը վաստակել է Մայր բուհի, ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների և ամենակարևորը՝ տավուշցիների վստահությունը, ձեռք է բերել բարձր հեղինակություն, ինչի վառ ապացույցը դիմորդների թվի կայուն ցուցանիշն է և նաև աճը:

Ուսումնական տարին մասնաճյուղի գործունեությունն իրականացվել է 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներին և նրանց իրականացման պլան-ժամանակացույցին համապատասխան՝ կարևորելով կրթության որակը և նրա շարունակական բարելավումը:

2019-2020 ուսումնական տարին մասնաճյուղում կրթությունն իրականացվել է արտաքին փորձաքննություն անցած 13 կրթական ծրագրերով, որոնք տարեվերջին վերանայվել են հետազոտական բաղադրիչի ներդրման նպատակով. գործող բոլոր ծրագրերի համար առանձնացվել են հետազոտական բաղադրիչ պարունակող 2

դասընթացները, վերանայվել կրթական վերջնարդյունքները և փաթեթները, գրականության ցանկերը, դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Տարածաշրջանի աշխատաշուկայի և դիմորդների հոսքի պարբերաբար ուսումնասիրությունները և այդ ոլորտներում առկա խնդիրները մասնաճյուղին ուղղորդում եմ արձագանքել և մշտապես վերանայել իրականացվող կրթական ծրագրերի ցանկը: Դրա ապացույցն են 2019-2020 ուսումնական տարուց իրականացվող բակալավրական 3 նոր կրթական ծրագրերը («Հոգեբանություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Դեկորատիվ կիրառական արվեստ»), ԿԳՄՄՆ լիցենզավորման գործակալության կողմից հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրով կրթություն իրականացնելու թույլտվությունը: Սկսվել են նաև «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական և «Մեխատրոնիկա և ռոբոտոտեխնիկա» բակալավրական կրթական ծրագրերի ներդրման հայտերի պատրաստման գործընթացները:

Հաշվետու ուսումնական տարին մասնաճյուղի առկա ուսուցմամբ 12 մասնագիտությունների 13 կրթական ծրագրերով ընդունվել է 166 դիմորդ (նախորդ ուսումնական տարին 76-ի փոխարեն), այդ թվում՝ 35-ը անվճար, 131-ը վճարովի, իսկ հեռակա ուսուցմամբ 8 կրթական ծրագրերով՝ 52 դիմորդ (նախորդ ուսումնական տարին 40-ի փոխարեն): Մասնաճյուղի 336 դիմորդներից 326-ը (շուրջ 97%-ը) Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտներն են:

Մասնաճյուղն ընդունելության համակազմի պահպանման և ընդլայնման համար մշտապես կազմակերպում է փոխադարձ այցելություններ Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի միջնակարգ և ավագ դպրոցներ, ավարտական դասարանների աշակերտների համար իրականացվում են դաս-քննարկումներ, «Բաց դռներ»-ի օրեր, բաց դասեր և օլիմպիադաներ: Համավարակի պայմաններում այս գործընթացն արդյունավետ իրականացվել է միայն 1-ին կիսամյակում (կատարվել են այցեր միայն Տավուշի մարզի 41 հանրակրթական դպրոցներ): Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների հետ մասնաճյուղի ակտիվ համագործակցության շրջանակներում բարձր առաջադիմությամբ քոլեջների 17 շրջանավարտ իրենց կրթությունը շարունակել են մասնաճյուղում՝ 7

մասնագիտությունների գծով: 2019-2020 ուսումնական տարում մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում ուսանել է 1307 ուսանող (նախորդ ուսումնական տարին՝ 1355): Նրանցից 1156-ը սովորել է վճարովի համակարգում, 118 ուսանող օգտվել է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից: 110 ուսանողների հատկացվել են պետական և ներ-բուհական կրթաթոշակներ, որոնցից 7-ին՝ անվանական: Ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրվել է մասնաճյուղի 250 ուսանողի, այդ թվում՝ 76-ը առկա ուսուցման համակարգում: Երկլեզու (հայերեն և անգլերեն) հավելվածով դիպլոմներ են հանձնվել մասնաճյուղի 348 շրջանավարտի, այդ թվում 166-ը՝ առկա ուսուցմամբ: Գերազանցության դիպլոմ է ստացել առկա ուսուցման 26 շրջանավարտ: Հաշվետու ուսումնական տարում 5 կրթական ծրագրերի ուսանողների համար մասնաճյուղում իրականացվել են մանկավարժի որակավորման լրացուցիչ դասընթացներ, որին մասնակցել են 1-ից 4-րդ կուրսերի 101 ուսանողներ, նրանցից 32-ը ստացել է մանկավարժի որակավորում:

Մասնաճյուղի շրջանավարտների ապագա գործունեությունը մշտապես գտնվում է մասնաճյուղի ուշադրության կենտրոնում: Ամեն տարի համալրվում և թարմացվում է շրջանավարտների, նրանց զբաղվածության և մասնագիտական գործունեության մասին տվյալների բազան: Արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակներում շրջանավարտներին տրամադրվել է տեղեկատվություն 62 թափուր հաստիքների մասին (43-ը՝ դպրոցների «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում, 19-ը՝ տարբեր բանկային, պետական և հասարակական կազմակերպություններում):

Մասնաճյուղում բարձրորակ և խորը մասնագիտական ուսումնառությունն ապահովում է նրա բարձրակարգ գիտամանկավարժական կազմը: 2019-20 ուսումնական տարում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ աշխատող 117 դասախոս, այդ թվում՝ 10 պրոֆեսոր (8,6%), 43 դոցենտ (36,8%), որոնցից գիտական աստիճանով՝ 8 դոկտոր և 62 թեկնածու. գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը 59,9% է: Մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետում դասավանդում են ՀՀ նկարիչների միության 7 և դիզայներների միության 1 անդամ: Մասնաճյուղի դասախոսների միջին տարիքը 48

է: Լրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերությունը կազմել է 11,2: Մասնաճյուղի ղեկավարությունը մշտապես աջակցում ու խրախուսում է իր դասախոսների հետազոտական և մեթոդաբանական գործունեությունը: ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում 2019թ. դեկտեմբերին հաստատվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգը, որով սահմանվել են աշխատողներին գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար վճարվող հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները: Կարգում առանձնահատուկ կարևորվում և խրախուսվում են գիտական գործունեության արդյունքները: Կարգի համաձայն 2019թ. սեպտեմբերից մինչև 2020թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար աշխատակիցները կստանան շուրջ 500 հազար դրամ լրավճար: Մասնաճյուղի դասախոսական և ուսանողական կազմի գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացմանը, տարբեր ոլորտներում հետազոտական ծրագրերի մշակմանը, կազմակերպմանն ու իրականացմանն աջակցելու համար մասնաճյուղում 2020թ. հուլիսից գործում է «Տավուշ» հետազոտական կենտրոնը: Կենտրոնում մշակվել է նրա բնականոն գործունեությունն ապահովող փաստաթղթերի փաթեթը: 2021 թվականից կենտրոնը կկազմակերպի գիտական դրամաշնորհների առաջին մրցույթը:

Շարունակվում են հետևողական աշխատանքները մասնաճյուղի գիտական հոդվածների «Ակունք» ժողովածուի գործունեությունը ԲՈԿ-ի նոր պահանջներին համապատասխանեցնելու համար, որովհետև ժողովածուի գոյությունը խթանում, նաև ֆինանսապես աջակցում է մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեությանը:

2019-2020 ուսումնական տարում մասնաճյուղն ունեցել է 1 ասպիրանտ և 3 հայցորդ, մասնաճյուղի 3 դասախոս ստացել է դոցենտի գիտական կոչում, 1-ը՝ պրոֆեսորի: Մասնաճյուղի հիմնական դասախոսական կազմի կողմից հրատարակվել է 34 գիտական հոդված, նրանք մասնակցել են հանրապետական 1 և 5 միջազգային 6 գիտաժողովի: Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսները մասնակցել են հանրապետական և միջազգային 23 ցուցահանդեսների:

2019-2020 ուսումնական տարում մասնաճյուղում շարունակվել է «Կրեդիտային համակարգով ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի» 2016-2021թթ. շրջափուլի իրականացումը: Վերապատրաստումների արդյունավետ և նպատակային իրականացման, կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացների բարելավումանը աջակցելու համար մասնաճյուղում 2020թ. հունվարին ստեղծվել է Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը: Որակավորման բարձրացման ծրագրի մոդուլներով առկա և առցանց տարբերակներով իրականացվել է 6 դասընթաց: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ուսուցման նորարարական մեթոդների մատուցմանը: Համավարակի սկսվելուց անմիջապես հետո մասնաճյուղի կողմից իրակացվել են «ZOOM հարթակ», «Ինչպես օգտագործել Google forms ձևաչափի հնարավորություններն առցանց քննությունների համար» դասընթացները, պատրաստվել են համապատասխան մեթոդական ուղեցույցներ դասախոսների և ուսանողների համար, ինչպես նաև երկու տեսահոլովակ:

Մասնաճյուղի բոլոր ջանքերն ուղղված են ուսումնառությունից և մասնավորապես դասախոսների դասավանդման որակից և արդյունավետությունից, մանկավարժական և մասնագիտական կարողություններից ուսանողների բավարարվածության մակարդակի բարձրացմանը, ինչի վերաբերյալ ուսանողներն իրենց կարծիքներն արտահայտում են ԵՊՀ առցանց հարցման միջոցով: 2019-20 ուսումնական տարում 1-ին կիսամյակի միջին թվաբանական միավորը կազմել է 4.72, 2-րդ կիսամյակինը՝ 4.75 և այդ գնահատականները բարձր են նախորդ ուսումնական տարվա գնահատականներից:

Մասնաճյուղն առանձնահատուկ ուշադիր է ուսումնական գործընթացի անխափան և հարմարավետ կազմակերպման նկատմամբ: Հաշվետու ուսումնական տարում վերանորոգվել են լսարանները, լաբորատորիաները և արվեստանոցները, նրանց համար ձեռք է բերվել անհրաժեշտ գույք, տեղադրվել են տեսահսկման սարքեր, ներդրվել է անվտանգության ժամանակակից համակարգ: Մասնաճյուղում գործում է 178 համակարգչով ներքին ցանց, մասնաճյուղն ունի համակարգչային 4 սրահ, տեսասարքերով համալրված 4 լսարան, համակարգչային տեխնիկայով համալրված 6 լսարաններ, 6 արվեստանոցներ: Հաշվետու ուսումնական տարվա 2-րդ

կիսամյակում ստեղծված համավարակային պայմաններում մասնաճյուղն արագ անցել է առցանց ուսուցման կազմակերպմանը հստակ դասացուցակով, այդ նպատակով Zoom հարթակում ստեղծվել է 55 հաշիվ: Հաշվետու ուսումնական տարին բարելավվել են 112 համակարգիչների պարամետրերը, ինչի համար ձեռք են բերվել 886 հազար դրամի սարքավորումներ, արագացել է ինտերնետ կապը:

Մասնաճյուղը վարում է կայուն ֆինանսական և ռեսուրսախնայողության քաղաքականություն, աշխատավարձերը վճարվում են առանց ուշացումների, 2-րդ կիսամյակի առցանց ուսումնառությունն իր հերթին ապահովել է որոշակի խնայողություն: Ֆինանսների հոսքեր ապահովվել են նաև 2019 թվականին ներդրված ավանդների գծով՝ այն ավելացնելով 270 մլն դրամով:

Սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղը 2020թ. մարտին «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ընկերության հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն առաջին անգամ մասնաճյուղի 151 հիմնական աշխատակից մինչև տարեվերջ կունենան առողջության ապահովագրություն: 2019-2020 ուսումնական տարում տարբեր նպատակներով մասնաճյուղի արհբյուրոյի ֆիանանսական միջոցներից աջակցություն է ստացել 24 աշխատակից: Համավարակով պայմանավորված հաշվետու ուսումնական տարին Մայր բուհի սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի աշխատակիցները չեն օգտվել ԵՊՀ հանգստյան և մարզաառողջարանային բազաներից:

Մասնաճյուղի ռազմավարական կարևոր խնդիրներից է ուսանողների արդյունավետ և նպատակային պրակտիկաների իրականացումը, որոնց ծրագրերը պարբերաբար վերանայվում են: Համավարակի պայմաններում 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի պրակտիկաների մի մասն իրականացվել է առցանց եղանակով՝ առաջ բերելով ևս մեկ անգամ ծրագրերը վերանայելու անհրաժեշտություն: Մասնաճյուղը տարբեր կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ ունեցել է ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների իրականացման 34 պայմանագիր: Այդ պրակտիկաների արդյունավետ իրականացման համար մասնաճյուղը հատկացրել է շուրջ 668 հազար դրամի ֆինանսական ռեսուրսներ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործընթացների և տարբեր իրադարձությունների, ուսանողական կյանքի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանն աջակցում են անվճար ինտերնետ կապը, մասնաճյուղի պաշտոնական և էլեկտրոնային գրադարանի կայքէջերը, Facebook սոցիալական ցանցում գործող մասնաճյուղի, նրա ստորաբաժանումների և ուսանողական կառույցների էջերը: 2020թ. հունիսի դրությամբ մասնաճյուղի պաշտոնական կայքն ունի 256 էջ, որից 4-ը ներդրվել է հաշվետու ուսումնական տարում: 2019-2020 ուսումնական տարում տեղադրվել են 35 հոդված ու տեսանյութ, 73 հայտարարություն, 128 նորություն, լուսաբանվել են 2 իրադարձություն և 3 գիտական կոնֆերանս ու նստաշրջան: Կայքը պարբերաբար վերակառուցվում է:

Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանի կայքն իր այցելուներին տրամադրում է առավել քան 1000 էլեկտրոնային գիրք: Գրադարանը համագործակցում է ԵՊՀ գիտական գրադարանի հետ, հաշվետու ուսումնական տարին այն համալրվել է շուրջ 300 միավոր գրականությամբ, այդ թվում կատարվել են որոշ քանակությամբ նվիրատվություններ: Նոր գրականության ձեռք բերման համար գրադարանում ներդրված է պահանջագրերի ինստիտուտը: Գիտական և մշակութային գրականության և ընթերցանության կենտրոն լինելուց բացի այն հանդիպումների, ազատ քննարկումների, գրքերի շնորհանդեսների, ցուցադրությունների և մշակութային նախաձեռնությունների կենտրոն է: Գրադարանի վարիչը պարբերաբար մասնակցում է Հայաստանյան նորարար գրադարանների աշխատաժողովներին:

Մասնաճյուղի գործունեության, Տավուշի մարզի սոցիալ-մշակութային և ուսումնագիտական կյանքում նրա ունեցած դերի և պահանջվածության վերաբերյալ հասարակության կարծիքի ուսումնասիրման համար մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը իր ֆեյսբուքյան էջի միջոցով 2019 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրել է հարցում: Հարցմանը մասնակցած Տավուշի և այլ մարզերի 32 համայնքների թվով 183 բնակիչների 91%-ը ԵՊՀ ԻՄ-ի դերը գնահատել է գերազանց և լավ՝ միջին գնահատականը կազմել է 4.5:

Մասնաճյուղը կրթության, գիտության, մշակույթի, պատմական և ազգագրական գործունեության, երիտասարդական քաղաքականության մի շարք

ուղղություններում հետևողական ընդլայնում է իր համագործակցությունների շրջանակը: 2019-2020 ուսումնական տարին համատեղ կրթական և գիտահետազոտական ծրագրեր, միջոցառումներ և դասընթացներ իրականացնելու համար կնքվել են համագործակցության 8 պայմանագրեր և հուշագրեր: Այդ թվում մասնաճյուղն ակտիվ համագործակցում է «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի և ՌԴ Գժելի պետական համալսարանի հետ: Հաշվետու ուսումնական տարին, համավարակի հետևանքով ուսանողների փոխանակության ծրագրի շրջանակներում չի կայացել մասնաճյուղի ուսանողների ամենամյա այցը Ֆրանսիայի Վալանս քաղաքի Մաեստրիս համալսարան, իսկ «Ֆրանս-հայկական ասոցիացիայի» ներկայացուցիչների այցը մասնաճյուղ տեղի ունեցավ և կրթաթոշակներ հանձնվեցին նախապես ընտրված ուսանողներին:

2020թ. փետրվարին ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության շրջանակներում պայմանագիր է կնքվել «Փրոջեքթ հարմոնի» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ, որի շնորհիվ մասնաճյուղում ստեղծվել է «Ամերիկյան գրադարան և դասընթացի կենտրոն», որտեղ հաշվետու ուսումնական տարում կազմակերպվել են անգլերեն լեզվի և այլ դասընթացներ ուսանողների, դասախոսների և մարզի աշակերտների ու երիտասարդների համար:

Մասնաճյուղի արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ 2019-20 ուսումնական տարում իրականացվել են մի շարք համագործակցային ծրագրեր, որոնց նպատակն է եղել ուսանողներին ներգրավել մարզի հիմնախնդիրների, ուսանողների կարիքների, սոցիալական և տնտեսական խնդիրների ուսումնասիրմանը, վերհանմանը և հնարավորության դեպքում դրանց լուծմանը: Հաշվետու ուսումնական տարում համագործակցող կազմակերպությունների, հիմնադրամների, ընկերությունների հետ համատեղ ուսանողների համար կազմակերպվել են շուրջ երկու տասնյակ առկա և առցանց դասընթացներ և քննարկումներ, այցելություններ և այլն: Տավուշի թեմի առաջնորդարանի աջակցությամբ 100 հազար դրամի չափով փոխհատուցվել է մասնաճյուղի 25 ուսանողների ուսման վարձերը: Կազմակերպվել է հանդիպում մասնաճյուղի հաջողակ շրջանավարտների հետ: «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները Իջևանի քաղաքապետարանում

մասնակցել են «Իջևան համայնքի մունիցիպալ կառավարման տեղեկատվական համակարգը ԱՏՀ հիմքով» ծրագրին և այլն։

Հաշվետու ժամանակահատվածում ՀՕՖ-ի Մաթևոսյան կրթավճար ծրագրի շրջանակներում մասնաճյուղի 7 ուսանողների տրամադրվել է ուսման վճարի ամբողջական փոխհատուցում, Հինդլյան կրթավճար ծրագրով՝ 14 ուսանողների ամբողջական և մասնակի փոխհատուցում։ Մասնաճյուղը ներառված է նաև «Անուշ Մաթևոսյան կրթավճար» ծրագրում։

Մասնաճյուղի ուսումնագիտական և մարզամշակութային առօրյան ձևավորում են ուսանողական կառույցները։ 2019-2020 ուսումնական տարում ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է մասնաճյուղի 25-ամյակին նվիրված «Անկախության առաջնեկը» հանրապետական գիտաժողովը (մասնակցել են ՀՀ 25 բուհերի 38 ուսանողներ և նրանց զեկուցումները տպագրվել են «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում), «ՀՀ նախագահությունը ԵԱՏՄ-ում 2019 թվականին. ձեռքբերումներն ու առկա խնդիրները» թեմայով սեմինար-քննարկումը, որի ժամանակ ուսանողներին հետաքրքրող հարցերին հանգամանալից պատասխանել է ՀՀ ԱԺ փորձագետ, պ.գ.թ., դոցենտ Գրիգոր Բալասանյանը, «Աշխարհը՝ COVID 19-ից առաջ և հետո» առացանց սեմինար-քննարկումը, որը վարել է ՀՀ Կենտրոնական բանկի Հատուկ հետազոտությունների բաժնի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գևորգ Մինասյանը։ Մասնաճյուղի ուսանողների հավաքականը մասնակցել և հաղթել է ՀՊՄՀ-ի ՈՒԽ-ի հիմնադրման 25-ամյակին նվիրված «12-ամյա կրթական համակարգն ապահովում է բարձրորակ կրթություն ՀՀ-ում» թեմայով բանավեճում և ինտելեկտուլ խաղում։ Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը՝ նաև առցանց տարբերակով, կանանց և տղմարդկանց շախմատի մասնաճյուղային առաջնություններ, կինոդիտումներ, մրցույթներ, խաղարկություններ և այլն։

Մասնաճյուղի ուսանողական խորհուրդը պաշտպանում, հետևողականորեն բարձրաձայնում և լուծում է ուսանողների ուսումնական և մշակութային կարիքները։ Նա իր ներկայացուցիչներն ունի մասնաճյուղի կառավարման բոլոր օղակներում, որոնք ակտիվ մասնակցում են մասնաճյուղի ռազմավարական գործունեության

իրականացման ծրագրերին և միջոցառումներին, իսկ իրենց ձեռք բերած կառավարման հմտությունները նրանք դրսևորել են ուսանողական ռեկտորատում: 2019-2020 ուսումնական տարում մասնաճյուղի ուսանողական խորհուրդը կազմակերպել է հանրապետական և միջազգային տարբեր տոներին, մասնավորապես մասնաճյուղի 25-ամյակին նվիրված միջոցառումներ՝ ֆոտոմրցույթ, գեղանկարների, գրաֆիկական և ազատ ոճային նկարների մրցույթ, ցուցահանդես, խնայողությունների խաղ, «Ուսանողների կրեատիվ մտքի ձևավորումը շուկայում» մոդուլ խաղ, կինոմանների մրցույթ և կինոդիտումներ, իրականացրել է մասնագիտական թեմատիկ քննարկումներ: Ֆակուլտետներում գործել են մասնագիտական ակումբներ և այլն:

2019-2020 ուսումնական տարում ևս մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության ուսանողները մասնակցելով ԱՄՆ խաղաղության կորպուսի կողմից կազմակերպվող “Write On! Competition 2020” էսսեների միջազգային մրցույթին զբաղեցրել են առաջին տեղեր: Մասնաճյուղի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի ուսանողը ՀՀ պետական բուհերի 14 ուսանողների հետ ճանաչվել է ՀՀ լավագույն ուսանող և այցելել Արաբական Միացյալ Էմիրությունների մայրաքաղաք Աբու Դաբիի Գիտության և տեխնոլոգիայի Խալիֆա համալսարան:

Որակի ներքին ապահովման գործընթացները ներառում են մասնաճյուղի գործունեության բոլոր ոլորտները: Մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը 2019-2020 ուսումնական տարում արդյունավետ աշխատել է կրթական ծրագրերի ղեկավարների հետ, աջակցել է նոր կրթական ծրագրերի հաստատման գործընթացին, խորհրդատվություններով աջակցել է ամբիոններին՝ դասընթացների փաթեթների կազմման գործում, կատարել է արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրություն, վեր է հանել խնդիրները, հավաքագրել նրանց առաջարկները և կատարել դրանց վերլուծություն: Այս գործընթացներում ակտիվ մասնակցել է նաև որակի ներքին գործընթացներին աջակցող ուսանողական աշխատանքային խումբը:

Հաշվետու ուսումնական տարում ՄԿՈԱ բաժինը ներքին և արտաքին շահակիցների քննությանն է ներկայացրել մասնաճյուղի 2014-2019թթ.

գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրամշակված համակազմը: 2019թ. դեկտեմբերին կազմակերպել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 25-ամյակին նվիրված «Ես վստահում եմ իմ բուհին» խորագրով աշխատաժողով, որում ներկայացվել և քննարկվել են ուսանողների և դասախոսների մոտիվացիային խանգարող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, վեր հանվել դրանց հաղթահարման ճանապարհները: 2020թ.հունվար-մարտ ամիսներին համակարգել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը, որի արդյունքում կազմվել է ինքնավերլուծության զեկույցը:

2020թ. մայիս-հունիս ամիսներին բաժինն առաջին անգամ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացրել է ուսումնասիրություն առցանց կրթության տված հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ: Հարցմանը մասնակցել է մասնաճյուղի առկա ուսուցման 1-ից 3-րդ կուրսերի 289-ը (80%) և 10 ամբիոնների 93 դասախոս (63%-ը): Հարցման արդյունքները վկայել են, որ մասնաճյուղում հաջողվել է արդյունավետ իրականցնել առցանց ուսուցում, ապահովել գիտելիքի և մասնագիտական կարողությունների փոխանցում, ուսանողի ձեռքբերումների գնահատում և այլն: Հարցմանը մասնակցած բոլոր դասախոսները և ուսանողների գերակշիռ մասը՝ 84,4%-ը փաստել են, որ բավարարված են մասնաճյուղում առցանց ուսուցման կազմակերպումից:

Մասնճյուղի աշխատակազմը գիտակցում է, որ Մայր բուհի միակ մասնաճյուղը լինելը մեծ պատասխանատվություն է և պատիվ, ուստի կշարունակի ամեն ինչ անել այդ բարձր անունը պատվով կրելու համար: »:

Արտահայտվեց ԵՊՀ Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, պրոֆեսոր Մ. Միքայելյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈւԽ նախագահ Լուիզա Մադաթյանը:

Մասնավորապես Ռ. Բարխուդարյանը կարևորեց ուսանողական հարցումների մեջ հեռակա և առակա ուսուցման համակարգերի համեմատական վերլուծությունը իսկ Լուիզա Մադաթյանին հետաքրքրում էր այն հարցը թե որքանով է համապատասխանում տարածաշրջանի խնդիրներին Տնտեսական քաղաքականություն և իրավունք մասնագիտությամբ նախատեսվող մագիստրոսական կրթական ծրագիրը, որնի ի պատասխան Մ. Միքայելյանը նշեց,

որ կատարվել են հարցումներ շրջանավարտների շրջանում, քննարկվել են համապատասխան մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետի գիտական խորհրդում։

Առցանց քվեարկությամբ՝ 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 48/3

Ընդունել ի գիտություն։

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ի 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) մասին » հարցի հետ կապված լսեցին ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանի հաղորդումը։

ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ Մ. Մխիթարյանը մանրամասն ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2021թ. եկամուտների և ծախսերի նախահաշվը՝ տես հավելված 1։ Մասնավորապես կատարվեց համեմատություն նախորդ բուջեի հետ և նշվեց, որ այս տարի նախահաշվում ունենք 10 միլիոն դրամ պակաս քան նախորդ տարի էր նախատեսված։

Արտահայտվեցին՝ Ռ. Բարխուդարյանը, Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, Լ. Հարությունյանը, Ա. Մարգարյանը, Մ. Միքայելյանը, Մ. Զուրաբյանը։

Առցանց քվեարկությամբ՝ 30 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվել է.***

Որոշում 48/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 11-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 11-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1 Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2021 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծին համաձայն հավելված 1-ի։
2 Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2021 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվը ներկայացնել ԵՊՀ հաստատման։

<u>Ընթացիկ հարցեր։</u>

Լսեցին՝ 4.1 «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը հաստատելու մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը։ Նա նշեց, որ ներկայացվող կարգը (տես հավելված 2) նախօրոք ուղարկվել է գիտխորհրդի անդամներին, որոնք հնարավորություն են ունեցել մանրամասն ծանոթանալու և գրավոր առաջարկություններ ուղարկելու։

Արտահայտվեցին՝ Ռ. Բարխուդարյանը, Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Միքայելյանը, Վ. Ավագյանը, Գ. Հովհաննիսյան, Մ. Ճաղարյանը։

Մասնավորապես եղան առաջարկներ փորձագետների քանակի և վարձատրության վերաբերյալ, հայտի գնահատման միավորների վերաբաշխման հետ կապված և այլն։ Ա. Մակարյանը նշեց, որ օգտվելու ենք ԳՊԿ-ի փորձագետների բազայից, որոնք վարձատրվելու են։

Արտահայտվողները առաջարկեցին հաստատել կարգը առաջարկվող (առաջարկները մանրամասն հստակեցված կուղարկվեն գիտքարտուղարին գրավոր) փոփոխություններով հանդերձ։

Առցանց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 48/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը համաձայն հավելված 2-ի։

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

Լսեցին՝ 4.2 «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը»

հաստատելու մասին լսեցին ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: Նա նշեց, որ անցած տարվա ավարտական աշխատանքների պաշտպանությունը մեզ հնարավորություն ընձեռեց նկատել մի շարք բացթողումներ, որոնք անհրաժեշտ էր ուղղել, ընդ որում առաջացած խնդիրները ուղղորդեցին մեզ անել որոշակի փոփոխություններ գործող կարգում: Ա. Մակարյանը մանրամասն ներկայացրեց կատարված փոփոխությունները: Նոր կարգը կարող եք տեսնել հավելված 3-ում:

Արտահայտվեցին՝ Ռ. Բարխուդարյանը, Ա. Մակարյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Միքայելյանը, Վ. Ավագյանը, Գ. Հովհաննիսյան, Մ. Ճաղարյանը:

Մասնավորապես առաջարկվեց 4.9. կետը՝ «Գրախոսների կազմը հաստատվում է ամբիոնի վարիչի կողմից» ձևակերպել հետևյալ կերպ՝ «Գրախոսների կազմը որոշվում է նախապաշտպանությունից հետո և հաստատվում է ամբիոնի վարիչի կողմից», եղան առաջարկներ նաև 1.6, 4.7, 6.3 և այլ կետերի վերաբերյալ :

Առցանց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ***որոշեցին.***

Որոշում 48/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 5-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման կարգը» համաձայն հավելված 3-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել 28.02.2018թ.-ին կայացած ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի թիվ 29/6 որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ